ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **11/10/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով,

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 11-ի թվով 13-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
3. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
4.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու

մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
5. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
6. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
7.Վայք համայնքի տարածքում գտնվող ծառերը հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
8.Վայք համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող նշված հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին.

1.1 Վայք քաղաքում գտնվող, 0.026084 հա մակերեսով, 10-003-0010-0010 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
1.2 Վայք քաղաքում գտնվող, 0.034513 հա մակերեսով, 10-003-0010-0008 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
1.3 Վայք քաղաքում գտնվող, 0.021326 հա մակերեսով, 10-003-0010-0011 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ՝

1.1 Վայք համայնքի Սերս բնակավայրի 3-րդ փողոց 17/1 հասցեում գտնվող 10-040-0006-0017 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 02102024-10-0009, գաղտնաբառ՝ A3J4HGXKEHJP) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,22842 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 456 850 (չորս հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

1.2 Վայք համայնքի Զեդեա բնակավայրում գտնվող 10-023-0306-0183 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 02102000-10-0009, գաղտնաբառ՝ A3J4HGXKEHJP) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ, մակերեսը՝ 6,26316 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 422 800 (չորս հարյուր տասներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Տալ համաձայնություն.

ա/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Կարմրաշեն բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.51559 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-027-0101-0102) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

բ/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Կարմրաշեն բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 1.3406 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-027-0101-0103) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 25 100 (քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

գ/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Կարմրաշեն բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 1.20822 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-027-0126-0016) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 22 500 (քսաներկու հազար հինգ) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով,

1. Տալ համաձայնություն՝

1.1 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Մարտիրոս բնակավայրում գտնվող, 10-033-0151-0002 կադաստրային ծածկագրով, 0.0180 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

1.2 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Գոմք բնակավայրում գտնվող, 10-019-0327-0062 կադաստրային ծածկագրով, 2.0 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

1.3 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Գոմք բնակավայրում գտնվող, 10-019-0328-0002 կադաստրային ծածկագրով, 19.0 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

1.4 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Սերս բնակավայրում գտնվող, 10-040-0110-0019 կադաստրային ծածկագրով, 1.1 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

1.5 Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Ազատեկ բնակավայրում գտնվող, 10-005-0112-0104 կադաստրային ծածկագրով, 0.04952 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

2. Հաստատել՝
2.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ հոկտեմբերի 7-ի N 2/փ 405 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական

նպատակային նշանակության, 10-026-0114-0003 կադաստրային ծածկագրով, 0,8 հա մակերեսով հողամասի, հողատեսքը՝
այլ, նպատակային նշանակությունները փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

3.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 12 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Շմավոն Մարութի Ամիրգուլյան՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

1.2 Հակոբ Հայկազի Գրիգորյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

1.3 Աննա Ֆրանցի Սիմոնյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ,

1.4 Սաթենիկ Լենդրուշի Աղաջանյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.5 Վարագ Ջանիբեկի Մնացականյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.6 Արմինե Անաստասի Սարգսյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.7 Հասմիկ Առաքելի Մարգարյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.8 Համեստ Վարդանի Մաթևոսյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.9 Ռուզաննա Ստեփանի Ալեքսանյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.10 Գայանե Մյասնիկի Բաբլոյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.11 Անահիտ Վարդանի Վարդանյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.12 Լյուդմիլա Ժիրայրի Միքայելյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Փոռ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 2023 թ-ին հրդեհի հետևանքով չորացած, կիսաայրված ծառերը և թփերը՝ թվով 93 (իննսուներեք) հատ:
2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել համայնքի անապահով ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 14–ին, ժամը՝ 16:00–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Ավագանու անդամներ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____